և եդին զՊաշպախիղուլին որ Հաճի Իպրահիմ յորջորջի։

Շաբաթ (22 Նոյ.) երեկոյիս Ագուլեցի Թորոսի յօտան կերայ զհացն, և երեկոյիս Թորոսն Կէլիպօլու ի մերս էր։

Առաւօտուս Կիրակի (23 Նոյ.) Տէր Աստուածատուրն Թոխաթու ի Մղսոնց նստաւ սակաւ և ել գնաց։ Հաճի Տէվրիշի տղան կարգեցաւ։

Դշի օրս (26 Նոյ.) վէզիրն գնաց ամենայն մեծամեծօքն ի դուրս և ետ նարդ և հրաման չոր միս անելոյ որպէս սովորն են ամենայն ամի առնել, և յետ դառնալն բազում մրգածախ տաճիկս և այլազգիս գանեալ և զօխայքն կոտորեալ։

Կիրակի (30 Նոյ.). Թադէոսն[1]) և օրթախն ի Մըղսոնցն էին։

Դեկտեմբեր ամիս օր Բշի. երեկոյիս Հոգևորտէրն (Թորոս) եկաւ յէտրէնու։

Եւ առաւօտուս Դշի (2 Դեկտ.) եկն Մարտիրոս վարդապետն և եպիսկոպոսքն առ նա։

Դշի (3 Դեկտ.). զՄէյտին մանղուլ արարին և տվին զՊօսնա և եդին զափուտան զԹօփալ Մէհէմէտ փաշան։ Մսացու արաւ Մուղսին։

Եշիս (4 Դեկտ.) Շարաֆի պառաւն մեռաւ, ի գերեզմաներն գնացաք։

Կիրակի (7 Դեկտ.) բարեկենդան Սուրբ Յակոբի. ի կնքտուք գնացի։ Երեկոյին մօտ առ կաթողիկոսն էաք։

Բշի (8 Դեկտ.). պահք Սուրբ Յակոբայ։

Դշի (9 Դեկտ.). երեկոյիս զԻսուֆ աղան սպանեցին ի ճանապարհին։ Գիշերս զերազն Երուսաղէմի

1) Թաթէոսն.